ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 06

24 ՀՈՒԼԻՍԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ

ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

ՀՀ Լոռու մարզի Գյուլագարակ համայնքի ավագանու արտահերթ նիստին ներկա էին 8 ավագանու անդամներ ՝ Խաչիկ Վարդանյանը, Ռուսլան Օհանյանը, Աիդա Սարգսյանը, Նարեկ Նալբանդյանը, , Սերյոժա Այվազյանը, Վարսենիկ Քալաշյանը, Արսեն Գրիգորյանը, Վրույր Այվազյանը :

Բացակա էին՝ Համլետ Գևորգյանը, Արտյոմ Տոնոյանը, Թամարա Գրիգորյանը, Տիգրան Արոյանը, Ալիկ Սարգսյանը, Դավիթ Մուրադյանը, Գոհար Պառավյանը:

Նիստին մասնակցում էին վարչական ղեկավարներ՝ Ա.Մագթաղյանը, Հ. Վարդանյանը Գոռ Աղաջանյանը, Իշխան Լալազարյանը, Մարտին Ալավերդյանը,համայնքապետարանի աշխատակիցներ ՝
Ա.Մարիկյանը, Մ.Մեսրոպյանը , Ս.Ղուկասյանը, Ա.Դավոյանը, Ժ. Մատինյանը:

<u>Նիստը վարում էր համայնքի ղեկավար՝ Խաչիկ Վարդանյանը:</u>

<u>Նիստն արձանագրում էր աշխատակազմի քարտուղարի պարտականությունները կատարող՝ Լուսինե Թորոսյանը</u>:

Օրակարգում՝

1. ՀՀ Լոռու մարզի Գյուլագարակ համայնքի ավագանու արտահերթ նիստի օրակարգը հաստատելու մասին:
/Զեկ.Խ.Վարդանյան/

2. Գյուլագարակ համայնքի բնակիչ Արմինե Գալստյանին դրամական աջակցություն տրամադրելու մասին:
/Զեկ.Լ.Թորոսյան/

3. ՀՀ Լոռու մարզի Գյուլագարակ համայնքի 2025 թվականի տարեկան բյուջեում փոփոխություն կատարելու մասին:
/Զեկ.Մ.Մեսրոպյան/

4. Գյուլագարակ համայնքի 2025թվականի բյուջեի առաջին եռամսյակի կատարման մասին Գյուլագարակ համայնքի ղեկավարի հաղորդումը ի գիտություն ընդունելու մասին
/Զեկ.Մ.Մեսրոպյան/

5. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Գյուլագարակ համայնքի 2026-2028 թթ. միջնաժամկետ ծախսերի ծրագիրը հաստատելու մասին:

/Զեկ.Մ.Մեսրոպյան/

Լսեցին՝

/

ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ.Խ.Վարդանյան/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետով՝ Գյուլագարակ համայնքի ավագանին որոշում է.

1.Հաստատել ՀՀ Լոռու մարզի Գյուլագարակ համայնքի ավագանու 2025թ. հուլիսի
24-ի արտահերթ նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ԿՈՂՄ-8, ԴԵՄ-0, ՁԵՌՆՊԱՀ-0

Որոշումն ընդունված է /կցվում է որոշում թիվ 45-Ա/

Լսեցին՝

ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԻՉ ԱՐՄԻՆԵ ԳԱԼՍՏՅԱՆԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/ԶԵԿ.Ա. Դավոյան/

Գյուլագարակ համայնքի ղեկավարին է դիմել Գյուլագարակ համայնքի Վարդաբլուր գյուղի բնակիչ Արմինե Գալստյանը: Վերջինիս որդու՝ Ռուբիկ Գալստյանի մոտ՝ ծնված 02.01.1996թ..-ին, հայտնաբերվել է սուր լեյկոզ: Որդու առողջական խնդրի պատճառով ընտանիքը հայտնվել է կյանքի դժվարին իրավիճակում: Դրամական աջակցությունը անհրաժեշտ է բուժման ծախսերը հոգալու համար:

Հիմք ընդունելով Արմինե Գալստյանի կողմից ներկայացված 16.07.2025թ. թիվ 378 դիմումը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ հոդվածի Գյուլագարակ համայնքի ավագանին որոշում է

1. Գյուլագարակ համայնքի բնակիչ՝ Արմինե Գալստյանին տրամադրել դրամական աջակցություն՝ 600000 (վեց հարյուր հազար) ՀՀ դրամ:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդող օրվանից:

ԿՈՂՄ-8, ԴԵՄ-0, ՁԵՌՆՊԱՀ-0

Որոշումն ընդունված է /կցվում է որոշում թիվ 46-Ա/

Լեցին՝

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. Մ. Մեսրոպյան/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, ՀՀ «Բյուջետային համակարգի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասով՝ Գյուլագարակ համայնքի ավագանին որոշում է.

1.Հաստատել Գյուլագարակ համայնքի 2025 թվականի տարեկան բյուջեում կատարված փոփոխությունները՝ համաձայն հավելվածի:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ԿՈՂՄ-8, ԴԵՄ-0, ՁԵՌՆՊԱՀ-0

Որոշումն ընդունված է /կցվում է որոշում թիվ 47-Ն/

Լսեցին՝

ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ 2025ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԱՌԱՋԻՆ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՀԱՂՈՐԴՈՒՄԸ Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. Մ. Մեսրոպյան/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և 83-րդ հոդվածի 2-րդ մասով՝ համայնքի ավագանին որոշում է.

1.Ընդունել ի գիտություն Գյուլագարակ համայնքի 2025թ. բյուջեի երկրորդ եռամսյակի կատարման մասին Գյուլագարակ համայնքի ղեկավարի հաղորդումը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ԿՈՂՄ-8, ԴԵՄ-0, ՁԵՌՆՊԱՀ-0

Որոշումն ընդունված է /կցվում է որոշում թիվ 48-Ն/

Լսեցին՝

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ 2026-2028 ԹԹ. ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ԾԱԽՍԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/ԶԵԿ. Մ. Մեսրոպյան/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի դրույթներով՝ Գյուլագարակ համայնքի ավագանին որոշում է

1. Հաստատել Գյուլագարակ համայնքի միջնաժամկետ ծախսերի ծրագիրը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից ԿՈՂՄ-8, ԴԵՄ-0, ՁԵՌՆՊԱՀ-0
Որոշումն ընդունված է /կցվում է որոշում թիվ 49-Ա/

ՆԻՍՏՆ ԱՐՁԱՆԱԳՐԵՑ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՔՐՏՈՒՂԱՐԻ ՊԺԿ

ԼՈՒՍԻՆԵ ԹՈՐՈՍՅԱՆ